

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N AG17

թ. _____

« »

_____թ.

«Վերանդա» ՍՊԸ-ն, ի դեմս Կարեն Ղարիբյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող, մի կողմից և _____, այսուհետ՝ Պատվիրատու, մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան՝

1.1. սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կազմակերպել և ապահովել Պատվիրատուի կողմից նշված անձանց հանգիստը (այդ թվում՝ սոցիալական փաթեթի շրջանակներում) ՀՀ և ԼՂՀ տարածքում:

1.2. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել հետևյալ ծառայությունները՝
Հյուրանոցի ամրագրում՝

(մանրամասն նշվում է հյուրանոցային տնտեսության օբյեկտի անվանումը, հասցեն, սենյակի տեսակը, սննդի կազմակերպման և մատուցման հաճախականությունը, հյուրերի քանակը)

Օրենքով նախատեսված այլ զբոսաշրջային ծառայությունների մատուցում՝

(Մանրամասն նշվում է ծառայության անվանումը)

Հետևյալ ժամկետներում՝ _____ 20 թ. Ժամը _____ - _____ 20 թ. Ժամը _____

1.3. Սույն պայմանագրում նշված ծառայությունների մատուցման ժամկետն է _____ 201 թ. - _____ 201 թ.:

2. Կողմերի իրավունքները, պարտավորությունները և պատասխանատվությունը՝

2.1. Կատարողը իրավունք ունի՝

2.1.1. պահանջել Պատվիրատուից Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում վճարել Ծառայությունների դիմաց,

2.1.2. միակողմանի դադարեցնել Պայմանագիրը, եթե Պատվիրատուի կողմից խախտվել է Պայմանագրի 3-րդ կետը:

2.2. Կատարողը պարտավոր է՝

2.2.1. ծառայությունները մատուցել պատշաճ որակով,

2.2.2. ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով սույն պայմանագրի 1.3. կետում նշված ժամկետում,

2.2.3. Պատվիրատուի պահանջով առավելագույնը 1 օրվա ընթացքում անհատույց վերացնել Կատարողի պատճառով առաջացած բոլոր թերությունները,

2.2.4. Փոխհատուցել սույն պայմանագրի կետերը խախտելու հետևանքով Պատվիրատուի կրած նյութական վնասները.

2.2.5. Պայմանագիրը սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակներում կնքելու դեպքում Պայմանագրի վաղաժամկետ դադարման կամ մասնակի կատարման դեպքերում Պատվիրատուին վերադարձման ենթակա գումարը, որը փոխանցվել է Կատարողին պետական բյուջեից տրամադրված միջոցներից, բացառապես փոխանցել Պատվիրատուի սոցիալական փաթեթի հաշվին:

2.3 Պատվիրատուն իրավունք ունի՝

- 2.3.1.** ստանալ սույն պայմանագրով և շրջագայության ծրագրով նախատեսված զբոսաշրջային համալիր ծառայությունները,
- 2.3.2** ստանալ անձնական անվտանգության, կյանքի, առողջության, սպառողի իրավունքների և գույքի պաշտպանության երաշխիքներ,
- 2.3.3** օրենքով սահմանված կարգով դիմել դատարան սույն պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում,
- 2.3.4** իր համար հասկանալի լեզվով Կատարողից ստանալ լրիվ և օբյեկտիվ տեղեկատվություն սույն պայմանագրի պայմանների մասին,
- 2.3.5** օգտվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներից:

2.4. Պատվիրատուն պարտավոր է՝

- 2.4.1.** պահպանել սույն պայմանագրով նախատեսված պայմաններն ու կանոնները,
- 2.4.2.** Սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայություններից ծառայությունների մատուցման սկզբի ժամկետից ոչ ուշ, քան երկու աշխատանքային օր առաջ հրաժարվելու դեպքում վճարել տուգանք սույն Պայմանագրի գնի 25 տոկոսի չափով:
- 2.4.3.** Սույն պայմանագրի 2.4.2. կետում նշված ժամկետի խախտմամբ սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայություններից հրաժարվելու կամ ծառայություններից ընդհանրապես չօգտվելու դեպքում վճարել տուգանք սույն Պայմանագրի գնի 50 տոկոսի չափով:
- 2.4.4.** Կատարողին փոխհատուցել Սույն պայմանագրի կետերը խախտելու, սույն պայմանագրի 1.2 կետում նշված ժամանակավոր կացության վայրերում, շրջագայության ընթացքում Պատվիրատուի կամ նրա կողմից լիազորված անձանց գործողությունների հետևանքով Կատարողի կրած նյութական վնասը:
- 2.4.5.** Պայմանագիրը սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության շրջանակներում կնքվելու դեպքում ստորագրումից հետո՝ 15 օրվա ընթացքում, ներկայացնել այն սոցիալական փաթեթի իր հաշիվը սպասարկող բանկ՝ վճարում կատարելու նպատակով,

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը՝

- 3.1.** Սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունների գինը կազմում է _____ ՀՀ դրամ (ընդ որում՝ Հյուրանոցում 1 գիշերակացի արժեքը կազմում է _____ ՀՀ դրամ):
- 3.2.** Սոցիալական փաթեթի շրջանակներում փոխանցում կատարելու դեպքում վճարման վերջնաժամկետ է համարվում բյուջետային տարվա վերջին օրը, այլ փոխանցումների համար՝ ամրագրում կատարելու օրը:
- 3.3.** Սույն պայմանագրի գինը Պատվիրատուի ցանկությամբ կարող է փոխվել:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄՍԺՈՐ)՝

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

5. Վեճերի լուծման կարգը՝

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձևառնելու դեպքում գործը հանձնվում է դատարանի քննությանը:

6. Եզրափակիչ դրույթներ՝

6.1 Սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները մատուցված են համարվում, եթե ծառայությունները մատուցելու նախատեսված ժամկետի ավարտից 1 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը Հյուրանոցային տնտեսության օբյեկտից ստանում է համապատասխան գրություն սույն պայմանագրի 1.2. կետով ամրագրված

ծառայությունները մատուցելու մասին և Պատվիրատուի կողմից գրավոր պահանջներ չեն ներկայացվում ծառայությունների որակի կամ ծառայությունների չմատուցման մասով:

6.2. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով՝ եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից :

6.3. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ.

7. Կողմերի վավերապայմանները

Կատարող	
Անվանում	«Վերանդա» ՍՊԸ
ՀՎՀՀ	02591076
Հասցե	ք. Դիլիջան, Մոլդովական 5 11
Հեռախոս	094485890
Բանկ	ԱԿԲԱ կրեդիտ Ազրիկոլ Բանկ ՓԲԸ
Հ/Հ	220001155591000
Ծառայություններ ստացող (Պատվիրատու) անձի	
Ազգանուն Անուն	
Անձնագրի սերիա, համար	
Հասցե	
Բանկ	
Հ/Հ	
Աշխատավայր և աշխատավայրի հասցե	
Հեռ.	

Պատվիրատու՝ _____

Կատարող՝ _____ *Տնօրեն Կ. Ղարիբջան*